



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. սեպտեմբերին /վերլուծություն/

2011թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15293 գործարքներ, որոնց քանակը 2011թ. օգոստոսի համեմատ նվազել է 2.3%-ով, իսկ 2010թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 2.4%-ով:

2011թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4412 օտարման գործարքների 77.2%-ը կազմել են առուվաճառքները, 22.2%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. սեպտեմբերին, 2011թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.7%-ով, իսկ 2010թ. սեպտեմբերի համեմատ՝ 8.7%-ով:

2011թ. սնպտնմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. սնպտնմբերին, 2011թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.8%-ով, իսկ 2010թ. սնպտնմբերի համեմատ աճել՝ 2.6%-ով:

2011թ. սնպտնմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	սնպտնմբեր 2010թ.	սնպտնմբեր 2011թ.	օգոստոս 2011թ.
Կենտրոն	455400	436200	438200
Արաբկիր	374800	337900	337800
Քանաքեռ-Զեյթուն	285700	265600	262900
Նոր-Նորք	232300	222100	226600
Ավան	240600	250500	247400
Էրեբունի	245700	232100	234300
Ծենցավիթ	247400	228900	223100
Դավթաշեն	272600	256300	258100
Աջափնյակ	232700	222800	221200
Մալաթիա-Սեբաստիա	237200	224500	227400
Նուբարաշեն	148100	144200	145400
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	270200	256500	256600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. սնպտնմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. օգոստոսի համեմատ, գրեթե չեն փոխվել:

2011թ. սնպտնմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 415 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. օգոստոսի համեմատ, աճել է 3.5%-ով, իսկ 2010թ. սնպտնմբերի համեմատ՝ 13.1%-ով:

2011թ. սնպտնմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սնպտնմբեր 2010թ.	սնպտնմբեր 2011թ.	օգոստոս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	144300	128400	124600
	Ապարան	45800	52700	54400
	Թալին	56800	66100	63200
Արարատ	Արտաշատ	98800	98100	99300
	Մասիս	134600	109800	113200
	Վեդի	95700	91200	94100
	Արարատ	84600	79600	82600
Արմավիր	Վաղարշապատ	162100	138900	137700
	Արմավիր	127000	113300	116300
	Մեծամոր	86400	77600	79800
Գեղարքունիք	Սևան	97200	90000	92100
	Գավառ	47700	54800	52400
	Մարտունի	87100	96400	92700
	Վարդենիս	31800	34600	35800
	Ճամբարակ	20100	25500	24300

Լոռի	Վանաձոր	94500	88200	89900
	Ստեփանավան	60100	74500	72400
	Սպիտակ	83600	96800	93400
	Ալավերդի	33400	36800	35500
	Տաշիր	37000	48200	46100
	Թումանյան	6200	13300	13100
	Շամլուղ	3400	9400	9000
	Ախթալա	14300	22100	21300
Կոտայք	Աբովյան	154400	140300	136600
	Նոր Հաճն	137000	124200	120800
	Բյուրեղավան	108400	107400	103000
	Եղվարդ	113500	112200	109500
	Հրազդան	64800	59000	60300
	Ծաղկաձոր	177500	196200	188000
	Չարենցավան	77900	71800	73600
Շիրակ	Գյումրի	121600	105500	106800
	Արթիկ	62800	63200	65200
	Մարալիկ	30200	37000	35400
Սյունիք	Գորիս	141000	120700	123300
	Կապան	105100	98200	99100
	Սիսիան	82000	89000	89300
	Մեղրի	60900	75200	73300
	Ագարակ	34300	44400	42400
	Քաջարան	61900	70700	71700
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71800	79100	81800
	Եղնիզաձոր	110500	106000	109800
	Ջերմուկ	121200	116200	118200
Տավուշ	Դիլիջան	108900	102400	107100
	Իջևան	136500	118600	124100
	Բերդ	42200	52000	50300
	Նոյեմբերյան	34300	43300	42300
	Այրում	24100	31500	30100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. սնպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. օգոստոսի համեմատ, աճել են 0.1%-ով:

2011թ. սնպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 491 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 134, մարզերում միասին վերցրած՝ 357: 2011թ. սնպտեմբերին, 2011թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.4%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 4.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 2.2%-ով: 2010թ. սնպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 26.7%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 67.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 39.5%-ով:

2011թ. սնպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	սնպտեմբեր 2010թ.	սնպտեմբեր 2011թ.	օգոստոս 2011թ.
Կենտրոն	483700	452100	453400
Արաբկիր	400200	363500	363300
Քանաքեռ-Զեյթուն	297100	275600	269100

Նորք Մարաշ	284600	295200	292100
Ավան	254100	253800	250800
Էրեբունի	257700	238400	240800
Ծննդավիթ	262300	237000	235000
Դավթաշեն	285600	268400	272400
Աջափնյակ	249400	236000	234000
Մալաթիա Սեբաստիա	251900	233400	235600
Նուբարաշեն	150300	150100	150100
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	288800	273000	272400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. սնվածքներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. օգոստոսի համեմատ աճել են են 0.2%:

2011թ. սնվածքներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սնվածքներ 2010թ.	սնվածքներ 2011թ.	օգոստոս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	149300	133400	128500
	Ապարան	49800	55100	55900
	Թալին	58600	67000	64400
Արարատ	Արտաշատ	102800	104800	106000
	Մասիս	138600	115300	116800
	Վեդի	100700	95300	96800
	Արարատ	90300	85300	87200
Արմավիր	Վաղարշապատ	170600	162200	158000
	Արմավիր	131000	117800	119000
Գեղարքունիք	Սևան	101700	94000	96000
	Գավառ	50800	56900	54000
	Մարտունի	90800	97100	93500
	Վարդենիս	35300	38300	39500
	Ճամբարակ	23200	28400	27300
Լոռի	Վանաձոր	101400	97100	98500
	Ստեփանավան	64100	77500	75000
	Սպիտակ	87200	106200	102600
	Ալավերդի	36400	38200	37000
	Տաշիր	40500	52000	49800
	Թումանյան	10800	13900	13700
	Շամլուղ	7500	11000	10500
	Ախթալա	18200	23400	22500
Կոտայք	Աբովյան	171400	146400	144000
	Նոր Հաճն	139700	132000	128400
	Բյուրեղավան	111800	109000	104700
	Եղվարդ	123700	118200	115400
	Հրազդան	68700	63100	64000
	Ծաղկաձոր	318700	320500	309000
	Չարենցավան	82800	75000	75500
Շիրակ	Գյումրի	130900	117200	118000
	Արթիկ	65300	66900	67200
	Մարալիկ	32600	38000	38000

Սյունիք	Գորիս	145900	128900	132000
	Կապան	107300	102000	102000
	Սիսիան	85800	92400	92400
	Մեղրի	63400	76200	74300
	Ագարակ	35900	46200	44100
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	76000	82200	84000
	Եղեգնաձոր	114900	114000	118000
	Ջերմուկ	123600	119400	121400
Տավուշ	Դիլիջան	114700	108200	110000
	Իջևան	142400	128400	133000
	Բերդ	44200	54800	52600
	Նոյեմբերյան	36100	46000	44900
	Այրում	26000	33300	31800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. օգոստոսի համեմատ, աճել են 0.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 1443 միավոր /717.12 հա/ հողեր, որից Երևանում` 76 միավոր /5.94 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 823 միավոր /663.46 հա/, որից Երևանում` 6 միավոր /0.91 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 422 միավոր /37.42 հա/, որից Երևանում` 53 միավոր /2.64 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 170 միավոր /10.93 հա/, որից Երևանում` 17 միավոր /2.39 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 16 միավոր /4.56 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 4 միավոր /0.25 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 8 միավոր /0.50 հա/:

2011թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1273 միավորի /616.11 հա/ նկատմամբ իրականացվել են առավաճառքի գործարքներ, որից Երևանում` 45 միավոր /4.14 հա/, նվիրատվության գործարքներ` 157 միավորի /98.67 հա/, որից Երևանում` 28 միավոր /1.72 հա/ և փոխանակության գործարքներ` 13 միավորի /2.34 հա/, որից Երևանում` 3 միավոր /0.07 հա/:

Հանրապետությունում 2011թ. սեպտեմբերին, 2010թ. սեպտեմբերի համեմատ, հողերի առավաճառքի գործարքների քանակն աճել է 19.6%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առավաճառքի գործարքների քանակն աճել է 77.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 18.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 6.7%-ով: Հողերի առավաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում` 136.91 հա, որից 132.20 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 17.5%-ը կամ 223 գործարքներ /38.65 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում` 6 գործարք /0.62 հա/, իսկ 81.1%-ը կամ 1032 միավորը /576.21 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում` 36 միավոր /3.24 հա/: 2011թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 18 գործարք /1.24 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առավաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված

հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	1	0.03	5	0.59	0	0.00	0	0.00	29	1.55	7	1.69
Արագածոտն	13	2.81	4	0.30	8	1.07	6	0.06	54	64.52	0	0.00	27	3.27	3	0.37
Արարատ	3	3.62	3	0.17	1	0.14	12	0.36	47	35.52	1	0.05	57	4.74	2	0.03
Արմավիր	9	9.15	2	0.85	0	0.00	8	0.42	73	123.05	0	0.00	29	2.93	2	0.02
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	2	0.10	4	0.40	198	101.24	0	0.00	10	1.34	5	1.19
Լոռի	3	0.34	3	2.89	5	0.67	16	0.21	42	41.53	0	0.00	21	2.43	3	0.11
Կոտայք	6	3.00	1	0.003	15	0.96	30	0.70	148	91.56	0	0.00	98	7.87	13	0.91
Շիրակ	0	0.00	1	0.17	14	0.57	16	1.03	36	34.78	0	0.00	6	0.83	3	0.05
Սյունիք	7	1.37	0	0.00	1	0.32	2	0.09	14	20.64	0	0.00	4	0.37	2	0.72
Վայոց Ձոր	1	0.03	0	0.00	2	0.18	1	0.17	18	20.62	0	0.00	3	0.39	2	0.01
Տավուշ	3	4.12	1	0.13	3	0.45	3	0.68	53	10.45	0	0.00	16	1.18	2	0.02
Ընդամենը	45	24.44	15	4.51	52	4.49	103	4.71	683	543.91	1	0.05	300	26.90	44	5.12

Ստորև ներկայացվում է 2011թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	4	0.56	0	0.00	1	0.03	3	0.53	2	0.06	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.06
Արագածոտն	2	0.021	1	0.02	1	0.001	0	0.00	28	4.16	12	2.76	3	0.27	7	1.07	6	0.06
Արարատ	4	0.19	0	0.00	1	0.14	3	0.05	15	4.10	3	3.62	3	0.17	0	0.00	9	0.31
Արմավիր	2	0.03	0	0.00	0	0.00	2	0.03	17	10.39	9	9.15	2	0.85	0	0.00	6	0.39
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.50	0	0.00	0	0.00	2	0.10	4	0.40
Լոռի	10	0.62	2	0.44	1	0.04	7	0.14	14	3.15	0	0.00	1	2.45	4	0.63	9	0.07
Կոտայք	17	0.92	0	0.00	8	0.54	9	0.38	33	3.32	4	2.58	1	0.003	7	0.42	21	0.32
Շիրակ	8	0.13	0	0.00	4	0.11	4	0.02	23	1.63	0	0.00	1	0.17	10	0.45	12	1.01
Սյունիք	1	0.32	0	0.00	1	0.32	0	0.00	9	1.46	7	1.37	0	0.00	0	0.00	2	0.09
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.38	1	0.03	0	0.00	2	0.18	1	0.17
Տավուշ	2	0.35	1	0.13	0	0.00	1	0.22	8	5.03	3	4.12	0	0.00	3	0.45	2	0.46
Ընդամենը	50	3.14	4	0.59	17	1.18	29	1.37	159	34.18	39	23.63	11	3.91	35	3.30	74	3.34

Հանրապետությունում 2011թ. սեպտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք /0.81 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. սեպտեմբերին, 2010թ. սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 27.3%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.0 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 27.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 11.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 61.1%-ով,

հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 7.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ սճել է 83.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	12	2.76	90.7	718.5	432.5	28	38.15	365.0	12000.0	4265.7
Ապարան						1	0.31	86.5	2727.3	668.5
Թալին						18	20.40	93.6	5494.5	566.5
Ծաղկահովիտ						4	5.23	79.5	1000.0	222.0
Արարատի մարզ										
Արտաշատ						7	1.43	335.1	10833.3	2596.2
Մասիս	2	0.12	292.5	478.3	435.4	18	24.41	200.0	11904.8	3000.0
Վեդի	1	3.50	697.9	697.9	697.9	22	9.68	207.0	10795.1	1736.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5.11	66.0	317.6	119.7	25	21.15	294.3	9090.0	1553.0
Բաղրամյան	3	4.04	67.5	72.5	70.4	17	54.69	90.6	2561.1	737.1
Վաղարշապատ						28	45.27	444.4	11764.7	2922.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						188	82.30	199.8	1875.0	378.9
Ճամբարակ						1	0.10	60.5	953.3	320.0
Մարտունի								51.1	2850.0	705.5
Սևան								52.2	2134.8	305.0
Վարդենիս						9	18.84	41.2	2575.1	355.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	1.44	170.4	6424.2	737.5
Գուգարք						24	11.87	234.6	6065.9	795.0
Սպիտակ						1	0.51	250.0	5555.5	715.5
Ստեփանավան						1	1.40	90.6	1686.6	285.0
Տաշիր						13	26.32	45.3	1384.4	141.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	0.64	257.0	1358.3	625.1	48	36.86	279.3	11942.7	4786.3
Եղվարդ						41	33.48	174.4	11971.8	3100.0
Հրազդան	1	1.93	333.3	333.3	333.3	20	9.78	130.5	10256.4	2100.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						10	7.61	252.0	1693.1	583.8
Ամասիա						5	6.53	40.9	261.0	130.0
Անի						9	9.38	110.6	546.9	357.8
Աշոգք						8	5.77	58.5	215.8	116.5
Արթիկ						4	5.50	79.4	1428.6	355.0
Սյունիքի մարզ										
Գորիս	7	1.37	2000.0	2000.0	2000.0	2	1.64	92.6	1023.2	672.3
Կապան						4	3.18	120.0	841.6	322.1
Մեղրի								193.0	3000.0	700.0
Սիսիան						8	15.82	46.3	1977.4	465.5

վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.03	550.0	550.0	550.0	7	0.92	125.0	10000.0	1850.0
վայք						11	19.70	58.8	1430.7	586.5
Տավուշի մարզ										
Բերդ						49	7.86	213.3	3783.8	645.5
Իջևան	2	4.11	139.6	500.0	319.8			267.5	9454.5	1215.3
Նոյնմբերյան	1	0.02	5298.0	5298.0	5298.0	4	2.59	46.7	7368.4	820.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնտեսական օգտագործման հետևանքներից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	617.0	4275.4	4337.0	4306.2	18	17057.0	130.7	22200.0	2572.6
Ապարան	5	10114.0	318.5	2416.7	745.0	7	13383.0	124.1	609.6	340.5
Թալին						1	1072.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						1	1200.0	60.0	214.3	85.0
Արարատի մարզ										
Արտաշատ						3	4050.0	173.9	7140.3	894.0
Մասիս						40	28341.0	187.5	25000.0	1213.1
Վեդի						14	15024.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						9	9848.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան								100.0	833.3	227.5
Վաղարշապատ						18	17645.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	4340.0	186.6	1084.3	610.2
Ճամբարակ								71.3	2286.2	149.3
Մարտունի						2	2450.0	119.3	5000.0	277.0
Սևան	2	1027.5	118.5	484.7	301.6	2	2478.0	240.0	3110.4	295.0
Վարդենիս						2	4169.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	1	2587.0	393.4	393.4	393.4			114.3	1388.9	215.3
Գուգարք	1	945.0	2009.7	2009.7	2009.7	8	6954.0	77.9	14083.3	1020.0
Սպիտակ	2	2760.0	50.0	51.3	50.6	11	16110.0	104.9	1348.3	200.7
Ստեփանավան						1	800.0	88.2	1666.7	175.0
Տաշիր						1	480.0	45.3	400.0	89.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	1561.8	4976.7	4976.7	4976.7	46	36810.4	264.5	35353.5	1957.0
Եղվարդ	4	2677.0	1279.5	4037.7	3181.3	44	35106.0	173.6	27000.0	2840.0
Հրազդան						3	2779.0	117.7	34848.5	1321.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	2218.6	580.9	7963.8	4069.3			113.6	18750.0	331.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	1	1200.0	233.1	233.1	233.1	1	1350.0	67.9	180.6	156.0
Աշոցք						2	5130.0	40.8	144.0	62.0
Արթիկ	2	1100.0	278.5	429.8	354.1	3	1810.0	111.8	5000.0	216.5

Սյունիքի մարզ										
Գորիս						4	3666.0	112.2	1700.0	369.1
Կապան								67.9	2638.9	285.3
Մեղրի								68.5	632.9	182.6
Սիսիան								123.5	875.0	190.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	1750.0	137.4	139.9	138.6	3	3890.0	96.7	7659.6	497.8
Վայք								120.7	1448.3	196.5
Տավուշի մարզ										
Բերդ						3	840.0	75.8	810.0	109.0
Իջևան	3	4543.0	151.0	158.6	153.6	13	10996.0	74.1	14423.1	515.7
Նոյնեմբերյան								125.0	1948.1	214.5

2011թ. սեպտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 3 գործարք 0.16 հա մակերեսով, Լոռու մարզում:

2011թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 581 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 92.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. սեպտեմբերին, 2011թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8.4%-ով, իսկ 2010թ. սեպտեմբերի համեմատ՝ 18.9%-ով:

2011թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են քազմաբնակարան բնակելի շենքերի 47 բնակարանների, 20 անհատական բնակելի տների, 290 հասարակական, 46 արտադրական նշանակության օբյեկտների, 169 միավոր /756.43 հա/ հողերի և 9 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 13 վարձակալության գործարքների /այդ թվում 2 միավոր՝ 0.02 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. օգոստոսի համեմատ աճել է 44.4%-ով, իսկ 2010թ. սեպտեմբերի համեմատ՝ 30.0%-ով: 2011թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 756.43 հա հողերից 0.61 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 755.82 հա հողերից 1.55 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.16 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 303.27 հա, որից 302.04 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում վարձակալվել են 746.39 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	4	9.14
Արարատ	11	54.14
Արմավիր	9	9.71
Գեղարքունիք	1	2.90
Լոռի	13	103.37
Կոտայք	5	9.80
Շիրակ	2	13.30
Սյունիք	11	7.57
Վայոց Ձոր	4	302.04
Տավուշ	13	234.42
Ընդամենը	73	746.39

2011թ. սնպտնմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2022 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.2%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. օգոստոսի համեմատ, նվազել է 1.9%-ով, իսկ 2010թ. սնպտնմբերի համեմատ աճել՝ 11.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.7%/, առանձնատների /25.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /9.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 947 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. օգոստոսի համեմատ, նվազել է 9.2%-ով, իսկ 2010թ. սնպտնմբերի համեմատ աճել՝ 19.7%-ով:

2011թ. սնպտնմբերին հանրապետությունում գրավադրվել են 428.61 հա հողեր, որից 3.40 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 97.3%-ը կամ 417.15 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 366.97 հա, որից 365.40 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. սնպտնմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 202 գործարքներ, որից 144-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 78.2%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16.8%-ն՝ անհատական բնակելի տների, 1.5%-ը՝ այգետնակների, 0.5%-ը՝ արտադրականան նշանակության օբյեկտների, 2.0%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և 1.0%-ը՝ հողերի նկատմամբ: 2011թ. օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 4.1%-ով, ընդ որում Երևանում՝ 5.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 1.8%-ով: 2010թ. սնպտնմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 35.6%-ով, ընդ որում Երևանում՝ 28.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 56.8%-ով:

2011թ. սնպտնմբերին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման 1 /Շիրակի մարզում/ գործարք է արձանագրվել, որի քանակը 2011թ. օգոստոսի համեմատ ավելացնել է 1-ով, իսկ 2010թ. սնպտնմբերի համեմատ մնացել է անփոփոխ:

2011թ. սնպտնմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2595 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. օգոստոսի համեմատ նվազել է 2.2%-ով, իսկ 2010թ. սնպտնմբերի համեմատ աճել՝ 10.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.8%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե